## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**10 հոկտեմբերի 2017 թվականի N 108**

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N 1066-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Պարետի Բակալյանի սեփականությունը հանդիսացող 0102-0002 կադաստրային ծածկագրի 0.18 հա (վկայական N 05032012-07-0068) գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկների հողատեսքերի՝ հնդավոր պտղատու այգիների շարքը:
2. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Պարետի Բակալյանի սեփականությունը հանդիսացող 0102-0004 կադաստրային ծածկագրի 0.36 հա (վկայական N 05032012-07-0048) գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկների հողատեսքերի՝ հնդավոր պտղատու այգիների շարքը:
3. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Պարետի Բակալյանի սեփականությունը հանդիսացող 0102-0008 կադաստրային ծածկագրի 0.46 հա (վկայական N 05032012-07-0010) գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկների հողատեսքերի՝ հնդավոր պտղատու այգիների շարքը:

4. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Պարետի Բակալյանի սեփականությունը հանդիսացող 0102-0029 կադաստրային ծածկագրի 0.4369 հա (վկայական N 05032012-07-0026) գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկների հողատեսքերի՝ հնդավոր պտղատու այգիների շարքը:
5. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Արմեն Պարետի Բակալյանի սեփականությունը հանդիսացող 0102-0030 կադաստրային ծածկագրի 0.346 հա (վկայական N 06032013-07-0616) գյուղատնտեսական նշանակության վարելահողը փոխադրել գյուղատնտեսական նշանակության բազմամյա տնկարկների հողատեսքերի՝ հնդավոր պտղատու այգիների շարքը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 10**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**10 հոկտեմբերի 2017 թվականի N 109**

## ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի N 15-Ն հրամանի հավելվածով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թ. նոյեմբերի 22-ին՝ ժամը $11^{00}$-ին, անցկացնել Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր՝ 1.2-1) ատեստավորում:
2. Ատեստավորման նախապատրաստական աշխատանքների իրականացման պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանի (ծածկագիր՝ 1.2-1) վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ______________ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 10**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**10 հոկտեմբերի 2017 թվականի N 110**

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. 2017 թվականի հոկտեմբերի 13-ին՝ ժամը $11^{00}$-ին, գումարել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգով.
   1) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքի մասին
   2) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Պարտավորեցնել աշխատակազմի քարտուղար Արմինե Զաքարյանին՝ օրենքով սահմանված կարգով ավագանու անդամներին տրամադրելու արտահերթ նիստի օրակարգը, ընդգրկվելիք հարցերի որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 10**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**11 հոկտեմբերի 2016 թվականի N 111**

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2007 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 05-Ի N 01-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2007 թվականի հունվարի 05-ի «Նոր Արտամետի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 01-Ա որոշման հավելված N 5-ի 11-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 9-րդ ենթակետով՝

   «9) Հսկողություն է իրականացնում ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանության աշխատանքները ժամանակին կազմակերպմանը, չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը և առաջարկություններ է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ___________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2016 թ. հոկտեմբերի 11**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**11 հոկտեմբերի 2017 թվականի N 112**

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 53-Ն որոշման, ինչպես նաև համայնքի սոցիալական հարցերի հանձնաժողովի՝ 2011 թ. փետրվարի 14-ի N 1 և 2017 թ. հոկտեմբերի 10-ի N 06 արձանագրությունների պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Մարգարիտ Աշոտի Շահնազարյանին:
2. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 40.0 /քառասուն հազար/ դրամ հատկացնել համայնքի ներքոհիշյալ բնակիչներին.
   1) Վարդանյան Սերգեյ Վարազդատի՝ 20.0 /քսան հազար/ դրամ.
   2) Հովհաննիսյան Գառնիկ Սեդրակի՝ 20.0 /քսան հազար/ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 11**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## 13 հոկտեմբերի 2017 թվականի N 113

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. մայիսի 18-ի N 912–Ն որոշման պահանջները, ինչպես նաև քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի (հաշվառողի), հողաշինարարի որակավորման վկայական (N 045) ստացած անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը՝ ***որոշում եմ.***

1. Ռիմա Սարգսի Ադամյանին և Իրինա Ադամյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի 9-րդ փողոց N 23 հասցեում գտնվող 0.08 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 72.88 քմ արտաքին մակերեսով շինությունները՝ 58.48 քմ արտաքին մակերեսով կցակառույցը և 14.4 քմ արտաքին մակերեսով հորը, ճանաչել օրինական, քանի որ.
   1) դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,
   2) դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 58.48 x 1300 ≈ 76030 /յոթանասունվեց հազար երեսուն/ և 14.4 x 780 ≈ 11240 /տասնմեկ հազար երկու հարյուր քառասուն/ (ընդամենը՝ 87270 /ութսունյոթ հազար երկու հարյուր յոթանասուն/) դրամի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ԱԳԿՊԿ աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ նշված շինությունները գնահատելու և պետական գրանցման տալու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2017 թ. հոկտեմբերի 13
գ. Նոր Արտամետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**13 հոկտեմբերի 2017 թվականի N 114**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ**
**ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականության բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասերին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել հասցե.
    1) 0018-0001-հց 0.00825 հա՝ 2-րդ փողոց 1-ին նրբանցք N 5/1.
    2) 0004-0030-հց 0.03076 հա՝ 1-ին փողոց N 2/2:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2017 թ. հոկտեմբերի 13**

**գ. Նոր Արտամետ**